

ՄԻՋՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ Վ. ԴԱՎԹՅԱՆԻ
«ԵՐԿԻՐ, ԶԱՐԻ ՄՈՒՈՒՑՔ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Նշանագիտական տեսակետից լեզվի յուրաքանչյուր միավոր կարող է իմաստավորվել բանաստեղծական տեքստում հակադրվելով միևնույն մակարդակի լեզվական այլ միավորներին և ըստ այդմ էլ իմաստ ծեռք բերել իր գրաված դիրքի համապատասխան: Նշանի փոխարկելիության անքակտելի հատկանիշը չափա-զանց կարևորվում է բանաստեղծական տեքստերում ապահովվելով բանաստեղծական պատկեր-նշանի հարաշարժությունը:

Հիշյալ տեսակետը հատկապես կարևոր նշանակություն ունի բանաստեղծական տեքստերի թարգմանության համար:

Թարգմանության ընթացքում գործ ունենք միևնույն երևույթի հետ, երբ թարգմանչի համար խոսքային արտահայտությունը նույնպես ինչ-որ բան է նշանակում, քանի որ այն ընկալվում և ընդունվում է այդպիսին իր սեփական մշակույթի տարածքում: Վերջինում գոյություն ունեցող Ուրիշի կարծրատիպային ընկալումները պայմանավորված են ընդունող մշակույթում ամրագրված քարացած պատկերացումներով: Հիշյալ խնդրի ուսումնասիրությունը մասնավորապես պատկերաբանության առարկան է, որը ֆրանսիական համեմատական գրականության նախասիրությունների հիմքում է եղել:

Կարծրատիպի հասկացությունը, իբրև քարացած իմաստի կամ իմաստային կաղապարի դրսևորում, ի հայտ է եկել XX-րդ դարի քսանական թվականներին մշտապես լինելով հասարակագիտության ուշադրության կենտրոնում:

Ըստ ամերիկացի հրապարակախոս Վոլտեր Լիպմանի՝ կարծրատիպային պատկերները անհրաժեշտ են միջմշակութային հաղորդակցությանը, քանի որ առանց դրանց անհնար է ընկալել Ուրիշի մշակույթը:

Փորձենք միջմշակութային կարծրատիպի լեզվական դրսևորումները վերլուծել Վ. Դավթյանի «Երկիր, քարի մուլուցք» բանաստեղծության թարգմանության հիման վրա:

De pierre ici tout un pays; d'eau en furie	Երկիր քարի մոլուցք ու մոլեգնած դուշուր.
Murmure d'herbe ici dans la teinte de bleu	Երկիր, սեզի սոսափ ու կապույտի սահանք.
Corne de rose dans les hauts monts hisnés vers Dieu	Աստծուն խոյահարող լեռան քարե եղջյուր
Dans l'abîme jeté, pénitence de pierre.	Ու զղջացող վիհի քարե ապաշխարանք:
Tout un pays ou blanche et de glace est la plainte	Երկիր, ձյունահողմի ճերմակ ու ձիգ զանգատ
Dans le fond des ravins, question des tempêtes	Եվ անդունդներն ընկած մրրիկների հարցում,
Vers le bas de la rive une clochette d'eau	Երկիր, քարափն ի վար ջրի կապույտ զանգակ.
Le chagrin du pétale et le pleur de la mousse.	Ծաղկաթերթի թախիծ ու մամուռի արցունք:
Cri de cuivre et soupir de granit, le pays A la beauté en croix sur la pierre de croix	Երկիր, պղնձի ճիչ, որձաքարի հառաչ Եվ խաչքարին խաչված գեղեցկության աղերս
Tout un pays face au soleil à l'infini Toi prière à genoux et toi élan du rite.	Երկիր, արեգակի ու անհունի առաջ Դու ծնկածալ աղոթք, վեր խոյացող դուծես:
Je suis de toi pays des longs siècles sans fin	Երկիր, որդին եմ քո, դար ու դարեր անկանք
Et je vais avec toi, hauteurs et précipices,	Ես գնում եմ քեզ հետ ճամփիս վիհ ու բարձունք.
Furieux par la pierre et dans le vent de neige	Ես՝ քարեղեն մոլուցք, ձյունահողմի զանգատ,
Toi, chagrin du pétale et larme de la mousse.	Ծաղկաթերթի թախիծ ու մամուռի արցունք:

(թարգ.՝ Ռուբեն Մելիք)

Եթե քարի մոլուցք → մոլեգնած ջուր հուզաշարի բաղադրիչները
շաղկապվում են ըմբոստություն, մոլեգնություն համակցող իմակաների շնորհիվ,
ապա քնքշություն համակցող իմակն իրար է շաղկապում

սեզի սոսափ → կապույտի սահանք

հուզաշարը:

Մի կողմից՝ ընթերցում ենք.

Աստծուն խոյահարող լեռան քարե եղջյուր

որտեղ կրկին առկայանում է *ըմբոստության* իմակը, իսկ մյուս կողմից՝

Ու զղջացող վիհի քարե ապաշխարանք

տողը, որով բանաստեղծական ես-ը շեշտադրում է *խոնարհություն* նշանակցումը:

Երկվության, հակադիւ հատկանիշների համակցումով է հյուսվում Վահագն Դավթյանի գրչի շնորհիվ մեր աչքերի առջև հառնող Հայաստան աշխարհը: Այս հակադրությունների բարձրագույն դրսևորումներն են բանաստեղծական պատկերի հարաշարժության հակադիր ուղղվածությունները հետևյալ պատկերներում.

... դու ծնկաչոք աղոթք *(առկայացվող իմակ՝ խոնարհություն)*

... վեր խոյացող դու ծես *(առկայացվող իմակ՝ սրբագործում)*

Բանաստեղծի Առասպելական ես-ը նույնանում է հարազատ երկրի *հոգևոր ընթացքին*, նրա մշակութային էթոսի պատմությունը բացահայտվում է

վիհ և բարձունք

ներհականիշային խորհրդանշական զուգորդման միջոցով:

Հետաքրքրական է, որ բանաստեղծության բնագրի գեղագիտական անհերքելի արժեքը հայրենի բնաշխարհի, հայոց ոգեղենության և բանաստեղծական ես-ի կատարյալ միաձուլման մեջ է՝ իբրև մեկ և անքակտելի *ոգեղեն իրողության*: Ցավոք, հայկական մշակութային էթոսի հիմքերից մեկը կազմող նույնացումը հարազատ բնաշխարհին անտեսվել է թարգմանչի կողմից, ինչն էլ հանգեցնում է բանաստեղծական պատկերների նշանակցումային որոշակի շեղումների:

Օրինակ՝

Ու զղջացող վիհի քարե ապաշխարանք

Երկիր, ծյունահողմի ճերմակ ու ձիգ գանգատ



պատկերը թարգմանվել է.

Dans l'abSme jetn, prnitence de pierre

Tout un pays ou blanche et de glace est la plainte

տողով:

Երկիր իմույթի համատեքստային հարակցվող իմույթներն են *վիհ* և *բարձրունք* պատկերները, որոնք համապատասխանաբար առարկայանում են հետևյալ պատկերաշարերով



Բանաստեղծական Ես-ը, նույնանալով հայրենի բնաշխարհին, կրկին ընդգծում է հարազատ ժողովրդի հավաքական Ես-ի ինքնաընկալումը բնորոշող համատեքստային ներհականիչությամբ բնութագրվող *ճանապարհի* դասույթի գոյությունը:

Բնագրի գեղագիտական հենքը կազմող հայոց մշակութային էթոսի և բնաշխարհի կատարյալ նույնացումը թարգմանության մեջ փախարհնվել է առանձին հատկանիշների վերագրումով *երկիր* իմության:

Բնագրում բանաստեղծական էթոսի միաձուլումը Հայաստան աշխարհի խորհրդանշանային ընկալմանը հասնում է իր գագաթնակետին վերջին քառյակում, երբ բանաստեղծական Ես-ը և հայրենիքը ընկալվում են որպես լիակատար համարժեքություններ, մինչդեռ թարգմանության մեջ վերջին քառատողում հիշյալ պատկերը աղճատվում է: Թարգմանիչը խուսափում է *moi* դերանվան օգտագործումից: Ներմուծելով *toi* դերանունը՝ բանաստեղծական Ես-ը հանդես է գալիս սոսկ իբրև հարազատ երկրի գավակ, սակայն չի նույնանում նրա հետ՝ ընկալելով ելակետային մշակույթի տեքստը իբրև *այլության* դրսևորում:

Տես. *Je suis de toi pays des longs siècles sans fin*
Et je vais avec toi hauteurs et précipices
Furieux par la pierre et dans le vent de neige
Toi chagrin du pntale et larme de neige...

վերջին անհամապատասխանությունը խախտում է նաև բնագրի արտահայտության պլանի շրջանաձև կառուցվածքը: Առաջին քառյակի *քարի մոլուցք* պատկերը կրկնվում է բանաստեղծության վերջում

*ես՝ քարեղեն մոլուցք,
ծյունահողմի գանգատ,
ծաղկաթերթի թախիժ ու
մանուշի արցունք*

տողն ընդգծում է հայոց մշակութային եթոսին բնորոշ հակադրությունները, ինչն արտահայտվում է *նրբություն-ամրություն* երկվությամբ և որը չի պահպանվում թարգմանվածքում՝ շեշտադրելով ընդամենը

Հայաստան – լացի, ողբի երկիր

միջմշակութային կարծրատիպային ընկալումը հետևյալ պատկերում.

toi, chagrin du ptale, larme de la mousse

Ակնհայտ է, որ բանաստեղծական բեմագրության փոփոխությունը պրաքսեմատիկ տեսակետից թուլացնում է *երկիր* իմույթի արժեաբանական հնչեղությունը, քանի որ զրկում է վերջինս իր բովանդակային ծավալը կազմող ներհականիչային բնույթ ունեցող միավորներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Barthes R., Aventure sémiologique. Ed. du Seuil. Paris, 1985.
2. Bres J., R. Delamotte-Legrand, F. Madray-Lesigne, P. Siblot, L'autre en discours, 1998.
3. Courtès J., La sémiotique du langage. Armand Colin, 2005.
4. Detrie C., Du sens dans le processus métaphorique, Paris : Champion, éd., 2001.
5. Amossy R., Images de soi dans le discours. La construction de l'éthos, Delachaux Niestlé, 1999, Lausanne-Paris, 128 p.

The present article is the study of linguistic manifestations of intercultural stereotypes through the comparison of poetry translation with original texts.

The relevance of intercultural stereotypes is reasoned by the existence of twofold tendencies in intercultural communication which is expressed by aspiration for cultural unification of valuable key-points on the one hand, and by desire to cognize and reveal the deep bases of aesthetic self-consciousness and linguistic unification on the other hand.

Such approach sets conditions for perception of a poetic text as an artistic discourse, which covers all variety of linguistic and extra-linguistic relations.